

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆԻ Խ. ԱՔՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ԱՆԱՀԻՏ ՊԵՏՐՈՍԻ ԱՐՆԱՈՒԴՅԱՆ

**ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՄՊԵՏԵՆՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐՈՒՄՍՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ**

**ԺԳ.00 01- «Մանկավարժության տեսություն և պատմություն»
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ - 2014

Ատենախոսության թեման հաստատված է Վ. Բրյուսովի անվան պետական
լեզվաբանական համալսարանում

- | | |
|----------------------------|---|
| Գիտական ղեկավար՝ | Մանկավարժական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր՝
Մ. Գ. Աստվածատրյան |
| Պաշտոնական ընդդիմախոսներ՝ | Մանկավարժական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր՝ Ա.Օ. Թովուզյան

Մանկավարժական գիտությունների
թեկնածու՝ Ն. Դ. Դավոյան |
| Առաջատար կազմակերպություն՝ | Ֆիզիկական կուլտուրայի հայկական
պետական ինստիտուտ |

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014թ. հունիսի 3-ին,
ժամը 14.00-ին և. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարանում գործող ՀՀ ԲՈՅ-ի «Մանկավարժություն» 020
մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ և. Աբովյանի անվան
հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 2014թ. հունիսի 3-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական
քարտուղար, մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ՝



Ա. Յ. Սվաջյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդիականությունը: Գիտության ու կրթության ժողովրդավարացման, գլոբալիզացիայի և միջազգայնացման, մասնավարժական նոր տեխնոլոգիաների, մուլտիմեդիական կրթական մոդելների զանգվածային ներդրման պայմաններում ի հայտ է գալիս կրթական միասնական տարածք, սկզբունքորեն նոր կրթական միջավայր ստեղծելու անհրաժեշտությունը:

Համաշխարհային քաղաքակրթության ժամանակակից զարգացումները, միջազգային կապերի բազմակողմանի ընդլայնման միտումները որոշակի հրամայական են դարձել մարդկային գործունեության տարբեր ոլորտներում անձնակենտրոն կրթական գործընթացներ կազմակերպելու համար: Հասարակության նորացումը միանշանակ ենթադրում է կրթության նորացում, իրական շրջադարձ դեպի մարդը, անհատը, նրա սոցիալականացման խնդիրները, նրա համամարդկային և ազգային արժեքները, այն է՝ հումանիստական մոտեցման իրականացում, մարդու իրավունքների պաշտպանություն, հանդուրժողականություն, էկոլոգիական անվտանգություն, սոցիալական համերաշխություն:

Նման կողմնորոշումը պահանջում է որոնել և ստեղծել ուսուցիչների մասնագիտական զարգացման այնպիսի համակարգ, որտեղ բացառիկ կարևորություն ունեն ժողովրդավարացումը, հումանիստական ուղղվածությունը, բազմալեզվությունը, միջմշակութային հաղորդակցությունը, սոցիալական համերաշխությունը և համապատասխան կոմպետենտությամբ օժտված անձի ձևավորումը, որը գտնվում է մշտապես ընդլայնվող փոխազդեցությունների խաչմերուկում, կողմնորոշվում է փոփոխվող և զարգացող միջավայրում: Կրթության արդի նպատակների լույսի ներքո ուսուցիչների մասնագիտական զարգացման համակարգի նկատմամբ նոր հասարակական պահանջների հաշվառումը ենթադրում է ուսուցչի աշխատանքի որակի քննադատական վերլուծություն և արժևորում:

Մասնավարժական կադրերի պատրաստման և վերապատրաստման գործընթացները նորացնելու նպատակով անհրաժեշտություն է ծագում ուսուցիչների վերապատրաստման համակարգի վերախմաստավորումն ու փոխակերպումը՝ այն ուղղորդելով դեպի մասնագիտական կոմպետենցիաների ձևավորումն ու զարգացումը: Ուսուցիչների վերապատրաստման ժամանակակից գործընթացի համար որակական փոփոխություններ ապահովող հանգուցային հասկացություններն են դառնում մասնագիտական կոմպետենտությունը, ինքնուսուցումը, ռեֆլեքսիան, ինքնորոշումը, ինքնակատարելագործումը և միջառարկայական ինտեգրումը:

Կրթության զարգացման ժամանակակից միտումներին համապատասխան ուսուցչի մասնագիտական կոմպետենտությունն ու կուլտուրան դիտարկվում են որպես կոմպետենցիաների ինտեգրված բազմաբովանդակ, բազմագործառութային ամբողջություն, որի միջոցով իրականացվում է ուսուցչի ուսումնադաստիարակչական, տեղեկատվական, հաղորդակցական, հանրամշակութային գործունեությունը:

Այսպիսով, հանգում ենք նորացող հասարակության պահանջները գիտակցող, ակտիվ գործող անհատի ձևավորման անհրաժեշտությանը, որը գտնվում է մշտապես ընդլայնվող միջմշակութային փոխազդեցությունների ոլորտում, հարմարվում է փոփոխվող և անհատականություն զարգացնող բարենպաստ միջավայրին:

Մանկավարժական ավանդական հիմնական կրթությունը երբեմն նեղ առարկայակողմնորոշիչ ուղղվածություն ունի, որի պատճառով դժվար է ամբողջ կյանքի ընթացքում գիտելիքների, կարողությունների, հմտությունների ու հատկանիշների շարունակական համընդհանուր զարգացում ապահովել: Նշված հանգամանքները թույլ են տալիս առանձնացնելու օբյեկտիվորեն ծագող որոշ հակասություններ.

- աշխատաշուկայի և հասարակական պատվերների, մասնագետների նոր մանկավարժական մասնագիտական կոմպետենցիաների տիրապետող սերնդի պատրաստման պահանջարկի և գործող ավանդական պրակտիկայի միջև,
- լեզվակրթության բնագավառում պետական կրթական չափորոշիչների, մասնագիտական կոմպետենցիաների ձևավորման պահանջների և դրանք կյանքի կոչող համապարփակ հայեցակարգի բացակայության միջև,
- նպատակային ուղղվածությամբ բազմամակարդակ և բազմակողմանի կոմպետենցիաներով օժտված ուսուցիչներ պատրաստելու անհրաժեշտության և լրացուցիչ կրթության համակարգում դրա բացակայության միջև:

Վերոնշյալ հակասություններով, խնդրո առարկայի ոչ բավարար մշակվածությամբ է պայմանավորված սույն հետազոտության արդիականությունը:

Չետագոտության օբյեկտը ուսուցիչների վերապատրաստման գործընթացն է:

Չետագոտության առարկան լեզվակրթության ոլորտի ուսուցիչների մասնագիտական կոմպետենցիաների զարգացման մեթոդական համակարգն է ուսուցիչների վերապատրաստման դասընթացներում:

Չետագոտության նպատակը օտար լեզվի ուսուցիչների մասնագիտական կոմպետենցիաների զարգացման համապատասխան

տեսական ու գործնական մեթոդաբանության հիմնավորումն է և վերապատրաստման գործընթացի արդյունավետության ապահովումը:

Յետազոտության գիտական վարկածն այն ենթադրությունն է, որ հասարակության զարգացման ժամանակակից պայմաններում ուսուցիչների մասնագիտական կոմպետենտության ձևավորումն ու զարգացումն ավելի արդյունավետ կընթանա, եթե.

- մանկավարժական պայմանները համապատասխանեն պետության և հասարակության կողմից կրթությանն առաջադրվող նոր պահանջներին,
- սահմանվեն ուսուցչի մասնագիտական կոմպետենցիաների տեսակներն ու բովանդակությունը միջառարկայական ինտեգրման պայմաններում,
- ուսուցիչների վերապատրաստման գործընթացն իրականացվի համագործակցային, փոխներգործուն առաջադրանքների միջոցով՝ մոդուլային տեխնոլոգիաների կիրառմամբ,
- հստակեցվեն ուսուցչի մասնագիտական կոմպետենտության զարգացման մեթոդաբանական հիմքերը,
- ուսուցիչների վերապատրաստման համակարգն ապահովվի շարունակական կրթությամբ միտված մեթոդաբանությամբ:

Յետազոտության օբյեկտով, առարկայով, նպատակով և վարկածով պայմանավորված են հետազոտության հետևյալ **խնդիրները**.

- կատարել թեմային համապատասխան մանկավարժական, հոգեբանամանկավարժական, մեթոդական աշխատությունների վերլուծություն՝ նպատակ ունենալով բացահայտել հիմնահարցի մշակվածության աստիճանը,
- բացահայտել, պարզաբանել և հստակեցնել մասնագիտական կոմպետենտություն և կոմպետենցիա հասկացությունները, դրանց առանձին բաղադրիչների բովանդակությունը,
- սահմանել լեզվակրթության ոլորտի ուսուցիչների մասնագիտական կոմպետենցիաների զարգացմանն ուղղված գործոնները,
- մշակել ուսուցիչների վերապատրաստման դասընթացների իրականացման մոդուլային տեխնոլոգիա՝ հիմնված ինտեգրված և փոխներգործուն առաջադրանքների վրա,
- փորձարկել ստեղծված մոդուլային տեխնոլոգիան և ստուգել դրա իրականացման ընթացքն ու արդյունավետությունը:

Յետազոտության մեթոդաբանական հիմքն են հանդիսացել.

- հումանիստական անձնակենտրոն դաստիարակության և ուսուցման հիմնարար դրույթները (Л.С. Выготский, В.А. Сухомлинский, John Dewey, В.А. Славенгин, Ա.Օ. Թովուզյան),

- ճանաչողական, իմացաբանական, ինչպես նաև անձի զարգացման ժամանակակից հոգեբանամանկավարժական հայեցակարգերն ու տեսությունները (Л.С. Выготский, John Dewey),
- լեզվի՝ որպես միջմշակութային հաղորդակցության կարևորագույն միջոցի, մասին փիլիսոփայական տեսությունը (Н.Барышников, И.Л. Бим, В.В. Сафонова, CEFR),
- մանկավարժական կուլտուրայի և կոմպետենցիաների զարգացման ժամանակակից մոտեցումները (И.А. Зимняя, И.Ф. Исаев, А. Н. Щукин, В.Д. Шадриков, А.В. Хуторской),
- լեզվակրթության քաղաքականության սկզբունքները (CEFR, Joe Sheils, Jean-Claude Beacco),
- ինքնակրթության, ինքնաստուգման մոդուլային ինտերակտիվ տեխնոլոգիաները (В.О. Пунский, А.В.Усова),
- շարունակական կրթության տեսությունը (И.А. Колесникова, М.Т. Громкова):

Յետազոտության բազան

Մոդուլային տեխնոլոգիայի ներդրմամբ փորձարարական աշխատանքներ են իրականացվել 2000-2007թթ. ՀՀ հանրակրթական դպրոցներում (Սպիտակի թիվ 1, Վանաձորի թիվ 5, Երևանի թիվ 181, Գյումրու թիվ 5, Գավառի թիվ 4, Իջևանի թիվ 1, Տավուշի մարզի Թեղուտի), Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանում ՀՀ ԿԳՆ Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում, «Մխիթար Գոշ» միջազգային համալսարանում, ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտի Երևանի, Վանաձորի, Գորիսի և Սիսիանի մասնաճյուղերում:

Յետազոտության մշակվածության աստիճանը:

Յետազոտության հասկացական ապարատի ճշգրտման, ուսուցիչների վերապատրաստման և կատարելագործմանն առնչվող հայրենական և արտասահմանյան առկա աշխատություններում ձեռք բերված փորձը, հունանիստական մանկավարժության և անձնակենտրոն մոտեցման հիմնադրույթները (А. Маслоу, John Dewey, В. Roger, Л.С. Выготский, В.А. Сухомлинский, И.Ф. Исаев, Ա.Օ. Թոփուզյան), մասնագիտական զարգացմանը ներկայացվող պահանջները, մասնագիտական կուլտուրայի և կոմպետենցիաների իմաստային ծավալը և բնութագրերը (В.А. Слостенин, И.Ф. Исаев, И.А. Зимняя, В.Д. Шадриков, А.В. Хуторской), ժամանակակից ուսուցիչների կոմպետենտության էությունը և կոմպետենցիաները որպես վերջինիս դրսևորում (И.А. Зимняя, И.Ф. Исаев, А. Н. Щукин): Նորարարական լեզվակրթության սկզբունքները, Եվրախորհրդի կողմից հրատարակված փաստաթղթերը, հաղորդակցական կոմպետենցիաների զարգացման դերը ուսուցիչների վերապատրաստման գործընթացում (CEFR, И.Л. Бим, Joe Sheils,

Jean-Claude Beacco, B.B. Сафонова), ՏՀ տեխնոլոգիաների ներդրման սկզբունքները (Е.С. Полат, И.С. Москалева, С.К. Голубева, Г.К. Селевко, Մ.Գ. Աստվածատրյան):

Հետազոտության նպատակին համապատասխան առաջադրված խնդիրների լուծման, գիտական վարկածի հաստատման համար օգտագործվել են հետևյալ մեթոդները.

գիտատեսական մեթոդներ`

- հետազոտության խնդիրն անդրադարձող տեսական մանկավարժական, հոգեբանական, մեթոդական, լեզվակրթությանն առնչվող գրականության, ուսուցիչների մասնագիտական զարգացման և վերապատրաստման վերահսկման ու գնահատման վերաբերյալ մոտեցումների, հայեցակարգերի վերլուծություն և համադրություն,
- հետազոտական նյութի համակարգում, դասակարգում, մասնագիտական գործունեության արդյունքների վերլուծություն,

էմպիրիկ մեթոդներ`

- մշտադիտարկում,
- հարցում,
- անկետավորում,
- թեստավորում,

վիճակագրական մեթոդներ`

փորձարկման փուլի գործնական առաջադրանքների, ստուգման, գնահատման, թեստավորման, մշտադիտարկման վիճակագրական տվյալների վերլուծություն:

Հետազոտության նորույթ:

Ստեղծվել է ուսուցիչների վերապատրաստման գիտականորեն հիմնավորված և գործնականում փորձարկված նոր, ինտեգրված մեթոդաբանական հարթակ` հիմնված մանկավարժական կրթության զարգացման արդի միտումների, անհատակողմնորոշիչ գործակցական կոմպետենտության մոտեցման, կրթահամակարգի առանձնահատկությունների հաշվառման հիման վրա:

- Այդ ուղղությամբ վերլուծվել և ըստ առանձնացված հայեցակարգային ուղղությունների դասակարգվել են առկա հետազոտությունները, աշխատությունները` նորովի մոտեցմամբ:

- Հստակեցվել են «կոմպետենտություն», «կոմպետենցիաներ» հասկացությունները` հիմնվելով հոգեբանամանկավարժական, մեթոդական, լեզվաբանական հետազոտությունների վրա:

- Մշակվել է մոդուլային տեխնոլոգիա, որն իր կիրառմամբ ուղղված է մանկավարժի մասնագիտական կոմպետենտության զարգացմանը:

Համակարգը ներառում է նորմատիվ-իրավական, հոգեբանմանկավարժական, փոխներգործուն մեթոդական, լեզվական բաղադրիչներ:

- Ժամանակակից պահանջների տեսանկյունից՝ նոր շեշտադրմամբ բացահայտվել են հաղորդակցական-լեզվական, առարկայական-մասնագիտական կոմպետենցիաները:

- Փորձ է արվել ուրվագծելու 21-րդ դարի նոր ուսուցչի կերպարը՝ որպես անձ, արհեստավարժ մասնագետ, դրական փոփոխությունների արձագանքող սուբյեկտ:

Հետազոտության տեսական նշանակությունը

- Մշակվել և կիրառվել է մասնագիտական կոմպետենտության զարգացմանն ուղղված դասընթացների կազմակերպման նորարարական մոդուլային տեխնոլոգիա, որը կարող է կիրառվել նաև այլ առարկայական ոլորտների ուսուցիչների վերապատրաստման դասընթացներում:
- Հիմնավորվել է մասնագիտական կոմպետենտության զարգացման մոդուլային հիմքի վրա կառուցված ուսուցիչների վերապատրաստման ինտեգրված գործընթացի արդյունավետությունը:
- Հաստատվել է այն գաղափարը, որ ձևավորված մասնագիտական կոմպետենցիաները հնարավորություն են ընձեռում հաղթահարելու առավել նեղ առարկայական գիտելիքահեն մոտեցումը՝ ընդլայնելով մասնագիտական կոմպետենտություն հասկացության ընդհանուր իմաստային ծավալը:

Հետազոտության գործնական նշանակությունը

1. Մշակվել է ուսուցիչների կատարելագործման իրականացման մեթոդապես ապահովված համակարգ, որը հնարավոր է կիրառել ուսուցիչների կատարելագործման տարբեր դասընթացներում:
2. Հետազոտության արդյունքները կարելի է օգտագործել մասնագիտական կրթության տարբեր ոլորտներում՝ դասախոսությունների, սեմինարների, գործնական պարապմունքների ժամանակ, ինչպես նաև ծրագրերի, դասագրքերի և ուսումնական ձեռնարկների ստեղծման նպատակով:

Հետազոտության իրականացման փուլերը

Առաջին փուլ (2007-2009թթ.): Հիմնախնդրի վերլուծություն, մասնագիտական գրականության ուսումնասիրություն, գիտական հասկացական ապարատի ձևավորում: Մանկավարժական տեսության ուսումնասիրություն և ուսուցիչների գործունեության դիտում: Հետազոտության վարկածի նպատակի, խնդիրների և մեթոդների հստակեցում և սահմանում:

Երկրորդ փուլ (2010-2012թթ.): Ուսուցչի մասնագիտական կոմպետենտության զարգացմանն ուղղված դասընթացների կազմակերպման

մասնագիտական մոդուլային տեխնոլոգիայի մշակում, դրա հիման վրա ուսուցիչների վերապատրաստման համագործակցային ուսուցման, ինտերակտիվ ռեժիմում փորձարկման գործընթացի, վարկածի ստուգման իրականացում, որը ներառում է.

- վերապատրաստման դասընթացի համար առաջադրված ծրագրի և ուսուցման մեթոդիկայի լրամշակում՝ ըստ հետազոտության վարկածի,
- վերապատրաստման դասընթացի իրականացում (օտար լեզվի ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ Երևանի Վ. Բոյուտովի անվան պետական լեզվաբանական համալսարանում, Երևանի թիվ 181, ՀՀ ԿԳՆ Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում),
- դասընթացի դիտարկում և ընթացքի հսկում,
- գործընթացի արդյունքների դասակարգում և վերլուծություն:

Երրորդ փուլ (2012-2013թթ.): Տվյալ փուլում իրականացվել են.

- վերապատրաստման դասընթացի առաջադրված ծրագրի և ուսուցման մեթոդաբանության վերջնական լրամշակում,
- հետազոտության վարկածին համապատասխան փորձարկման գործընթացի ստացված տվյալների համակարգում, ընդհանրացում,
- ուսուցիչների, մանկավարժների մասնագիտական գործունեության, դիտարկման, փորձարկման արդյունքների վերլուծություն, ամփոփում, վերաիմաստավորում, արժևորում:

Պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթները

1. Ժողովրդավարական հասարակության անհատի դաստիարակությունը ենթադրում է կրթական ավտորիտար ավանդական հարացույցի փոխակերպումը հումանիստական անձնակենտրոն կողմնորոշման մոտեցմամբ, ուսուցչի գործառույթների փոփոխություն՝ ի շահ ուսուցչի անհատականության, ինքնուրույնության զարգացման, համագործակցության ոլորտի ընդլայնման, տարբերակման և անհատականացման, գործնական-փորձառության և մշակութաբանական բաղադրիչների ինտեգրման:
2. Մասնագիտական կոմպետենցիաների և կոմպետենտության զարգացումը նախապայման է ուսուցչի որպես «Մարդ-Մարդ» ոլորտի մասնագիտության՝ մանկավարժության սուբյեկտի կուլտուրան ձևավորելու համար:
3. Սուբյեկտային գործոնների կառուցվածքը խարսխված է անձնային և մասնագիտական-մանկավարժական տարրերի համակցման վրա, որն ընկած է անձնային որակների և մասնագիտական-մանկավարժական կոմպետենտության զարգացման հիմքում:

4. Ուսուցչի կոմպետենտության ձևավորումը պայմանավորված է առարկայական ոլորտի (տվյալ դեպքում՝ լեզվակրթության) առանձնահատկություններով, մետաառարկայական կարողությունների բնույթով, ինչպես նաև ընդհանուր և մասնավոր կոմպետենցիաների զարգացման մակարդակով:

5. Մասնագիտական աճի հեռանկարայնությունը, մասնագիտական-նշանակալի անձնային որակների զարգացումը, առանցքային կոմպետենցիաների ձևավորումը պետք է իրականություն դառնա այն տրամաբանությամբ, որ լիովին համապատասխանի լեզվակրթության քաղաքականության ժամանակակից սկզբունքներին ու պահանջներին:

Յետազոտության փորձաքննությունը և ներդրումը

Յետազոտության արդյունքները պարբերաբար արտացոլվել են հիմնախնդրի վերաբերյալ տպագրված հոդվածներում, ուսումնական ձեռնարկներում, քննարկվել են գիտաժողովներում և սեմինար պարապմունքներում (որպես դրույթ, զեկուցում, ուսումնական նյութ):

Յետազոտության հավաստիությունն ու հիմնավորվածությունը

Երաշխավորվում են հիմնախնդրի բնագավառում առկա մանկավարժական գրականության և մշակված հայեցակարգերի համալիր վերլուծությամբ, հետազոտության գիտատեսական բազայով, առաջադրված օբյեկտին, առարկային, նպատակին, խնդիրներին և հետազոտության տրամաբանությանը համարժեք հետազոտական մեթոդների կիրառմամբ, փորձնական փուլերի տրամաբանական փոխկապակցվածությամբ, ստացված արդյունքների վերլուծությամբ, ընդհանրացմամբ, եզրակացությունների հիմնավորմամբ:

Ատենախոսության կառուցվածքը. աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, գրականության ցանկից, հավելվածներից և ծանոթագրությունից: Ընդգրկված են 9 աղյուսակ, 6 գծապատկեր, 10 տրամագիր: Հավելվածները ներառյալ՝ աշխատանքը 166 էջից է բաղկացած, առանց հավելվածների՝ 128 էջ:

ԱՏԵՆԱՒՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության ներածության մեջ ներկայացված են հետազոտության արդիականությունը, օբյեկտը, առարկան, նպատակը, հիմնական խնդիրները, գիտական վարկածը, հետազոտության մեթոդաբանական հիմքերն ու մեթոդները, մշակվածության աստիճանը, հետազոտության նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության բազան, պաշտպանությանը ներկայացվող դրույթները :

1-ին գլուխը՝ «Ուսուցիչների մասնագիտական կոմպետենտության ընկալումը», բաղկացած է երկու ենթագլխից:

1.1-«Ուսուցչի մասնագիտական կոմպետենտության հիմնախնդրի առկա պատկերը հասարակության զարգացման ներկայիս փուլում»

ենթագլուխը խնդրո առարկային առնչվող հայեցակարգային որոշ ընդհանուր, երբեմն իրար լրացնող, ինչպես նաև իրար հակադրվող մոտեցումների վերլուծությանն է նվիրված: Սակայն, դրանք բոլորն էլ վերլուծվել, դասակարգվել են ըստ մեր կողմից առանձնացված հայեցակարգային ուղղությունների, քննարկվող հիմնահարցերի և տեսակետների, ինչը դյուրին է դարձնում ամփոփ ներկայացնելու ուսուցիչների մասնագիտական զարգացման և վերապատրաստման հիմնախնդրի մշակվածության աստիճանը:

Վերլուծվել են ուսուցչի անձնային որակները, որոնցով պայմանավորված է մանկավարժական գործունեության արդյունավետությունը: Կոմպետենտության տեսանկյունից առանձնացված են երեք հիմնական բաղադրիչներ՝ անձնային որակներ, անհատական (սուբյեկտային) և մասնագիտական-մանկավարժական՝ հիմք ընդունելով Ն.Վ. Կուզմինայի, Ա.Վ. Մարկովայի, Լ.Ս. Միտինայի, Ի.Ա. Ջիմնյայայի, Ն.Ա. Ամինովայի և այլոց հետազոտությունները (Н.В. Кузьмина, С.Д. Пожарский, Л.Е. Паутова, 2008; А.К. Маркова, 1996; Л.М. Митина, 1990, И.А. Зимняя 2004), որոնցում առկա են ուսուցչի սուբյեկտային գործոնների կառուցվածքի, գործունեության ուղղվածության, ընդունակությունների և կոմպետենտության գաղափարները:

Ուսումնասիրվել են ուսուցչի վարպետության, գործունեության ոճին, խոսքի և վարվելակերպի կուլտուրային առնչվող հետազոտությունները, որոնցում հատուկ անդրադարձ է կատարվել հունանացմանն ուղղված դաստիարակչական խնդիրներին, մանկավարժական վարպետությանը, դրանց նկատմամբ համակարգված մոտեցում ցուցաբերելուն, տեսականորեն հիմնավորելուն և զարգացնելուն (Մ.Ս. Մանուկյան, 2000; Ա.Օ. Թոփուզյան, 2009):

Ուշադրության են արժանացվել ուսուցչի խոսքի, լեզվի մշակույթին, հաղորդակցությանն անդրադարձող հետազոտությունները (Լ.Ռ. Սանոյան, 2012; Օ.Ճ. Московиченко, 2010):

Արժևորվել են ուսուցիչների մասնագիտական զարգացման, որակավորման բարձրացման, կատարելագործման դասընթացների կազմակերպման ու կառավարման հարցերին առնչվող հետազոտությունները (И.А. Низовская, 2007; Զ.Զ. Պետրոսյան, 2011; Զ.Զ. Պետրոսյան, 2006):

1.2-«Մանկավարժի մասնագիտական կոմպետենտության

գաղափարը» ենթազլխում հստակեցվել, հիմնավորվել և ներկայացվել են ուսուցչի մասնագիտական կոմպետենտության ամբողջական նկարագիրը կազմող տարրերն ըստ համապատասխան նպատակների, գործառույթների, բովանդակության, կառուցվածքային բաղադրիչների ու կիրառման ոլորտի:

Պարզաբանվել են մանկավարժական կրթությանը և մասնագիտական զարգացմանը կոմպետենտային մոտեցման էությունն ու բնույթը, թե՛ տեսական և թե՛ գործնական առումով: Հաշվի առնելով այն, որ ժամանակակից մանկավարժության մեջ բազմազան են պատկերացումները մասնագիտական կոմպետենցիաների սահմանման, բովանդակության, իմաստային ծավալի, մեթոդների վերաբերյալ, հիմք է ընդունվել կոմպետենցիա և կոմպետենտություն հասկացությունների Ի.Ա. Ջիմնյայայի, Վ.Ա. Շադրիկովի, Ա.Վ. Խուտորսկոյի սահմանումները:

Կոմպետենտություն – գործունեության սուբյեկտի գիտելիքների, կարողությունների և անձնային որակների համալիր դրսևորում, որը ձևավորվում է մասնագիտական պատրաստության ընթացքում և հնարավորություն է տալիս հաջողությամբ լուծելու մասնագիտական գործունեության էությանը հարիր գործառնական խնդիրներ, սա նաև կոմպետենցիաների յուրացման արդյունքն է առանձին անհատի կողմից:

Կոմպետենցիաներ – մասնագետի գործունեության մեջ նախանշված հանգամանքներ՝ մեկի կողմից լավատեսություն հարցերի մի ամբողջ շրջանակի վերաբերյալ, որևիցե մեկի իրավասությունների, իրավունքների շրջանակը, ինչպես նաև գիտելիքների, կարողությունների, հմտությունների, անձնային որակների, գործնական փորձառության համակարգ, որով պայմանավորված է անհատի պատրաստվածությունը որոշակի ոլորտում մասնագիտական գործունեություն ծավալելու հաջողությունը:

Հիմնավորվել է, որ կոմպետենցիան վերաբերում է **գործունեությանը**, իսկ կոմպետենտությունը **գործունեության սուբյեկտի հատկանիշն է**¹:

Այսպիսով կոմպետենտությունը ոչ միայն չի հակադրվում գիտելիքներին, կարողություններին, հմտություններին և անձնային որակներին, այլև գիտելիքները, կարողությունները, հմտություններն ու անձնային որակների հանրագումար կարող է դիտարկվել մասնագիտական կոմպետենտության տեսանկյունից: Կոմպետենցիաները ընկալվում են որպես մասնագիտական գործունեության ակնկալելի և չափելի արդյունքների ինտեգրված բնութագիր:

¹ Хуторской А. Ключевые компетенции как компонент личностно-ориентированного образования // Народное образование. – 2003. - №2. – С.58-64; Шадриков В.Д. Базовые компетенции педагогической деятельности. // Сибирский учитель. – 2007. – N 6. – С. 5-15.

- Վերլուծվել են ուսուցչի հոգեբանամանկավարժական, մեթոդական, հաղորդակցական-լեզվական կարգավիճակային-դիրքային որակները՝ ընդգծելով ուսուցչի կողմից ճկուն կերպով սոցիալական դերեր փոփոխելու անհրաժեշտությունը (ուսուցչի դերերի երկացանկը՝ որպես ուղղորդող, խորհրդատու, մոդերատոր և այլն):
- Հիմնավորվել են մանկավարժի մասնագիտական դերերի, գործառույթների և դրանց հետ կապված որակների ձևավորման խնդիրները, ուսուցչին դիտարկելով ոչ միայն որպես մասնագիտական գործունեության բազմակողմանի զարգացած անհատ, ակտիվ սովորող/սովորեցնող, այլ նաև միջնակութային հաղորդակցության սուբյեկտ :

Սկզբունքային է համարվել այն, որ անձի մշակութային իքնորոշումը բազմակողմանի համընդգրկուն իրողություն է (սոցիալ-տնտեսական, գիտական, գեոդերային, մասնագիտական, հաղորդակցական, էթիկական, էթնիկ, տեղեկատվական), ուստի ուսուցիչը տվյալ լեզվի մշակույթի վերաբարգմանիչն է իր եսի, մայրենի լեզվի և մշակույթի դիտանկյունից:

Հիմնվելով նորագույն մասնագիտական գրականության մեջ միջմշակութային շփման կարողությունների դասակարգմանն առնչվող հիմնահարցի վերլուծության վրա՝ առանձնացվել են օտար լեզվի ուսուցչի գնոստիկ, նախագծային, կառուցողական, հաղորդակցական, հատուկ մասնագիտական և ռեֆլեքսիվ կարողությունները (И.А. Зимняя 2004, Н.В. Барышников 2010, Е.В. Максимова, 2012; Е.А. Климов, 1995):

2-րդ՝ «Ուսուցչի մասնագիտական կոմպետենտության զարգացման մոդուլային համակարգի մշակում» գլուխը բաղկացած է հինգ ենթաբաղիսից:

2.1-«Ուսուցչի մասնագիտական կոմպետենտության զարգացման տեսական դրույթներ» ենթագլուխում, ներկայացված են ուսուցչի մասնագիտական վերապատրաստման ամբողջական մոտեցման մեթոդաբանական հիմքը կազմող հետևյալ հիմնական սկզբունքները. անձնակենտրոն, գործունեության վրա հիմնված, կոմպետենտության, ուսուցման ու դաստիարակության միասնության, տեսության ու գործնականի կապի պահպանման, կրթության մատչելիության, գիտականության և գիտակցության:

Հիմնավորվել է, որ «պոստմոդեռնիստական» մանկավարժությունը ձգտում է սահմանել որակյալ մանկավարժության սկզբունքները, ընդլայնել յուրաքանչյուր կոնկրետ մարդու կրթության հնարավորությունները՝ հաշվի առնելով սեռը, տարիքը, ֆիզիոլոգիական և հոգեբանական առանձնահատկությունները, ընդունակությունները, դրդապատճառները, պահանջմունքներն ու հետաքրքրությունները, անձնային որակները, նրա կեցության ողջ բազմազանությունը՝ հասարակական, էթնիկական, կրոնական և այլն:

Մեկնաբանվել է այն, որ հումանիստական մանկավարժությունը հռչակելով անձնակենտրոն մոտեցումը, հասարակության, դպրոցի, մանկավարժների ուշադրությունը բևեռում է ակտիվ սովորողի՝ որպես ուսումնական գործընթացի իրավահավասար սուբյեկտի լիիրավ մասնակցի վրա՝ հաշվի առնելով վերջինիս ներուժն ու ձեռք բերած փորձը, ինչպես նաև այն, որ սովորողը դառնա ուսուցչի համախոհը, սեփական կրթության համահեղինակը: Այսօր մանկավարժության մեջ ամրագրվում է կոլեկտիվ ուսուցման գաղափարն, ըստ որի ուսումնական գործընթացում յուրաքանչյուր սովորողի ներգրավվածությունը հրամայական է դարձել (Մ.Սկրտչյան, 2011): Ուսուցման գործընթացի մասնակիցների փոխհարաբերությունները կառուցվում են ժողովրդավարության, անձի ազատ զարգացման իրավունքի, փոխըմբռնման, փոխադարձ հարգանքի սկզբունքների հիման վրա:

Այսօր հույժ կարևոր և արդիական են ժամանակակից միտումները լեզվակրթության ասպարեզում, որոնք արտացոլված են Եվրախորհրդի ամփոփիչ «Լեզուների իմացության/իազեկության համաեվրոպական համակարգ. Ուսումնառություն, դասավանդում, գնահատում» (Common European Framework of Reference for Languages; Learning, Teaching, Assessment. Council of Europe, Strasbourg, 2001) փաստաթղթում: Այստեղ ներկայացված են լեզուների ուսուցման նպատակները, խնդիրները, կրթության բովանդակությունը, գլխավորապես ըստ կոմպետենցիաների լեզուների տիրապետման մակարդակները: Հիշատակված փաստաթղթում կարևորվել է այն հանգամանքը, որ արդյունքները չափվում են տարբեր բնութագրիչների (descriptors) միջոցով, որոնք ընկած են լեզվական, հանրալեզվաբանական, գործաբանական կոմպետենցիաների հիմքում:

Մեկնաբանվել է այն, որ մասնագիտական կոմպետենտություն հասկացությունը, իբրև առանցքային ֆենոմեն, համակցվում է ուսուցչի՝ որպես շփման հաղորդակցության սուբյեկտի անձնային որակների ձևավորման մակարդակին՝ շեշտադրելով մի կողմից մանկավարժական նպատակադրումը, մանկավարժական մտածողությունը (նախագծային-գնոստիկ ընդունակություններ), մյուս կողմը՝ մանկավարժական ռեֆլեքսիան, մանկավարժական տակտը, մանկավարժական ուղղվածության գաղափարները (ռեֆլեքսիվ-պերցեպտիվ ընդունակություններ):

Այսպիսով, գերակայությունը տրվում է կոմպետենտության, սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների ձևավորման դրական մոտեցման, ինքնուսուցման և ինքնագնահատման: Այդ տեսանկյունից առանձնահատուկ ուշադրություն է դարձված վերապատրաստման դասընթացների մասնակից յուրաքանչյուր ուսուցչի ինքնազարգացմանը, ինքնավերափոխմանը, ինքնուսուցմանը,

մասնագիտական ինքնորոշմանը, ինչպես նաև համատեղ գործունեության ունակությունների ձեռքբերմանը:

2.2-«Ուսուցչի մասնագիտական կոմպետենտության կառուցվածքային-բովանդակային բնութագիրը» ենթազխում անդրադարձ է կատարվել ուսուցչի մասնագիտական կոմպետենտությանն առաջադրվող նոր պահանջներին՝ մասնավորապես շեշտը դնելով իրավական-նորմատիվ, հոգեբանամանկավարժական, ընդհանուր մշակութային, լեզվաբանական, հաղորդակցական բաղադրիչների ու պահանջների վրա, որոնք վճռորոշ են ուսուցիչների վերապատրաստման դասընթացների իրականացման գործում:


Կոմպետենցիաները ներկայացված են խմբավորված. մասնագիտական (նորմատիվ-իրավական, դիդակտիկական, առարկայական, դաստիարակչական, տեխնոլոգիական-մեթոդական, հոգեբանական, զարգացնող, ստուգող-շտկող, ռեֆլեքսիվ), հաղորդակցական, ընդհանուր մշակութային (հանրամշակութային), արժեքային, հոգևոր, էկոլոգիական:

Կոմպետենցիաներին անդրադառնալիս շեշտադրվել է այն, որ յուրաքանչյուր կոմպետենցիա իր ազդեցությամբ և կիրառմամբ երկկողմանի գործառական հատկանիշ ունի, այն մի կողմից կրթական գործընթացի մասնակից սուբյեկտների փոխգործունեությունը կարգավորող, խթանող գործոն է, իսկ մյուս կողմից ուսուցչի կոմպետենցիան ձևավորվում, մշակվում և զարգանում է՝ ուղղորդվելով դեպի հոգեբանամանկավարժական գործընթացի մյուս սուբյեկտներ, մասնավորապես՝ աշակերտներ:

2.3-«Ուսուցչի կոմպետենտության դիտարկման, գնահատման տեխնոլոգիաները» ենթազխում հիմնավորվել ու վերլուծվել են մանկավարժական ժամանակակից գործընթացի այնպիսի անկյունաքարային ֆենոմեններին առնչվող տեխնոլոգիաներ ու միջոցներ, ինչպիսիք են դիտարկումը, ստուգումը, գնահատումն ու արժևորումը, որոնք ուսուցման արդյունավետությունն ու բարձր որակն են ապահովում՝ արձագանքելով հասարակական պահանջներին ու կրթական բարեփոխումներին, օբյեկտիվորեն արձանագրելով սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների ռեալ մակարդակը: Ընդգծվում է այն, որ անհատակողմնորոշիչ, գործունեության վրա հիմնված մոտեցման համատեքստում ուսուցչի աշխատանքի գնահատումը ենթադրում է արդյունքից և գնահատումից անցում հոգեբանամանկավարժական գործընթացի վերլուծությանը, շարունակական կրթությանն ու դրա կատարելագործմանը:

2.4-«Ուսուցչի մասնագիտական կոմպետենցիաների ձևավորումը և զարգացումը մոդուլային տեխնոլոգիայի ներդրմամբ» ենթազխում ներկայացված է ուսուցիչների մասնագիտական կոմպետենցիաների համակարգված ձևավորումն ու կատարելագործմանն ուղղված մոդուլային

տեխնոլոգիա, որի բովանդակային բաղադրիչների ընդհանրական կառուցվածքը հետևյալն է.



Մոդուլի կառուցվածքային առաջին օղակը, որը բաղկացած է երկու մասից, ներառում է կրթական քաղաքականության արդի պայմաններից բխող, պետության կողմից որոշեգրված ակտերին, որոշումներին համապատասխան գիտելիքներն ու ռազմավարությունները: Հոգեբանամանկավարժական, նորմատիվ-օրենսդրական ոլորտների գիտելիքները, որոնք մատուցվում են ուսուցչին վերապատրաստման դասընթացներում, միտված են արդիականացնելու, կատարելագործելու մասնագիտական կրթությունը՝ այն համապատասխանեցնելով արդի հասարակական պահանջներն:

Կառուցվածքային երկրորդ բաժինը, որն ընդգրկում է երեք բաղադրիչ, հիմնականում նպատակ է հետապնդում ուսուցչին ծանոթացնելու ուսուցման և ուսումնառության ժամանակակից գիտամանկավարժական ու մեթոդաբանական հայեցակարգային մոտեցումներին, մասնագիտական գործունեության գերակայություններին, ապա դրանց հիման վրա զարգացնելու ուսուցչի մասնագիտական կոմպետենտությունն ու կոմպետենցիաները:

Մոդուլի կառուցվածքային բաղադրիչների բովանդակությունը պահանջում է ճկունություն ցուցաբերել՝ կոնկրետ դասընթացի իրականացումը համապատասխանեցնելով մասնակից ուսուցիչների համակազմին, մասնագիտական պատրաստության աստիճանին, ուսումնասիրվող նյութի բովանդակության արդիականացմանն ու մեթոդական շեշտադրումներին:

2.5-«Ուսուցչի մասնագիտական զարգացման ծրագրի վերլուծություն փորձարարական աշխատանքների արդյունքների հիման վրա» ենթազխում վերլուծված և ամփոփված են մոդուլային տեխնոլոգիայի փորձնական

կիրառման նպատակները, իրականացման փուլերը, ներդրման ընթացակարգը, ստացված արդյունքների տվյալները: Ընդգծված անդրադարձ է կատարվել մոդուլի դիդակտիկական զինանոցի ու գնահատման համակարգի, մոդուլի միջոցով ուսուցչի մասնագիտական կոմպետենտության ձևավորման ու զարգացման մակարդակի աճի գնահատման ձևաչափերի կիրառմանը, արդյունքների վիճակագրական տվյալների, առանձնահատկությունների վերլուծությանը:

Սոդուլի կիրառման փորձնական ուսուցման փուլերն են.

1. **Նախապատրաստական փուլ՝** ուսուցիչների պատրաստվածության, գիտելիքների, կարողությունների, կոմպետենտության զարգացման մակարդակի որոշում.
2. **Փորձարկման փուլ՝** նախապատրաստական փուլի արդյունքների հիման վրա դասընթացների նպատակների, բովանդակության, կազմակերպման հարմարեցումն ուսուցիչների համակազմի հատուկ պահանջներին.
3. **Վարկածի ստուգման փուլ՝** դասընթացի պլանավորված, ակնկալվող արդյունքների ներկայացում վերապատրաստման մասնակիցներին.
4. **Դասընթացի բովանդակության մատուցման փուլ** (բուն գործընթացի կազմակերպում)՝ բովանդակային չորս ուղղություններով (կրթության ոլորտի օրենսդրություն, օտար լեզու, ուսուցման և գնահատման տեխնոլոգիաներ, ՏՄՏ-ներ) տեսագործնական դասընթացների իրականացում.
5. **Ամփոփիչ փուլ՝** Փորձարարական ուսուցման առանձնացված փուլերի արդյունքների վերլուծություն, համակարգում, ընդհանրացում և վերափմաստավորում:


Սոդուլի փորձարկման արդյունքների գրանցման համար առանձնացվել են հինգ կոմպետենցիա և յուրաքանչյուրի գնահատման չափանիշներ հանդիսացող գիտելիքներն ու կարողությունները՝ դրանք են.

1. *Նորմատիվ – իրավական կոմպետենցիա*
2. *կոմպետենտային մոտեցում լեզվակրթության իրականացմանը*
3. *մասնագիտական/առարկայական կոմպետենցիա*
4. *ՏՄՏ-ներ կիրառելու կոմպետենցիա*
5. *ստուգող, շտկող, գնահատող կոմպետենցիա:*

Աշխատանքում ներկայացված են տրամադրեր, որոնցում պատկերված են առանձին կոմպետենցիաների զարգացման նախնական և ամփոփիչ ստուգումների արդյունքների համեմատությունները: Հաջորդիվ ուսուցիչների վերապատրաստման ընթացքում **մասնագիտական/առարկայական կոմպետենցիայի** զարգացման տվյալների ամփոփագիրն է, որը ստացվել է մոդուլային տեխնոլոգիայի փորձարարական կիրառման ընթացքում, ինչին հաջորդում է տվյալ արդյունքները համեմատող տրամագիրը:

N	Գնահատման չափանիշներ հանդիսացող գիտելիքներ, կարողություններ	Մասնագիտական/առարկայական կոմպետենցիա					
		Նախնական ստուգում			Ամփոփիչ ստուգում		
		Ա	Գ	Ֆ	Ա	Գ	Ֆ
1	Նոր լեզվական նյութի ներմուծման եղանակների տիրապետելը	74%	78%	76%	78%	84%	82%
2	Նոր լեզվական նյութի յուրացման ռազմավարությունների տիրապետելը	68%	70%	68%	72%	74%	76%
3	Ընկալողական (ռեցեպտիվ) և վերարտադրողական (պրոդուկտիվ) վարժությունների համակարգի տիրապետելը	58%	64%	62%	65%	68%	65%
4	Բանավոր / գրավոր խոսքի ուսուցման ինտեռակտիվ մեթոդների տիրապետելը	68%	70%	67%	72%	76%	72%
5	Օտար լեզվի դասի պլանավորման սկզբունքների կիրառումը	54%	58%	60%	57%	62%	65%
6	Առարկայի չափորոշիչ թեմայի չափորոշչային պահանջը դուրս գրելու կարողություն	68%	72%	70%	72%	78%	76%
7	Թեմատիկ պլանի շրջանակում մեկ առանձին դասի պլան մշակելու կարողություն	68%	70%	67%	74%	75%	72%
8	ԸՆԴԱՄԵՆԸ	65,4%	68,4%	67,1%	70%	73,8%	72,5%

Մասնագիտական/առարկայական կոմպետենցիա



Որպես փորձարկման արդյունքների վերլուծության կարևոր հետևություններ շեշտադրված են մասնավորապես.

- դասընթացի նպատակի կոնկրետացումը և հստակ սահմանումը՝ պայմանավորված վերապատրաստվողների խմբի համակազմով, մասնակիցների առարկայական և մեթոդական պատրաստվածությամբ,
- մասնակիցների փորձի և կոմպետենտության առկա մակարդակի, իմացական, տարիքային և անձի այլ կարևորագույն հոգեբանական գործառույթների հաշվառումը,
- ունակությունների, կարողությունների զարգացման բուն գործընթացը,
- ուսուցման գործընթացի ինքնուղղորդվածությունը, ռեֆլեքսիվ փորձառությունը:

Եզրակացություններ

Իրականացված հետազոտությունը հաստատեց այն վարկածն ու ենթադրությունները, որ.

1. Արդի ժամանակաշրջանի մանկավարժության, լեզվաբանության, հոգեբանության, մեթոդաբանության դիրքորոշումների լույսի ներքո ուսուցիչների կոմպետենտության ձևավորումը դարձել է ուսուցիչների վերապատրաստման՝ որպես մասնագիտացման կարևոր ու անհրաժեշտ օղակի վճռորոշ գործոն:

2. Գոյություն ունեցող տարբեր մոտեցումներից և սահմանումներից անհրաժեշտություն է ծագում միասնականացնելու մասնագիտական կոմպետենցիա, կոմպետենտություն հասկացությունների ձևակերպումները, ինչից ելնելով հետազոտության մեջ՝

- ընդհանրացվել, ճշգրտվել և միասնականացվել են մասնագիտական կոմպետենցիա, կոմպետենտություն հասկացությունների սահմանումները,
- հստակեցվել է դրանց իմաստային ծավալը, կառուցվածքը և գործառույթները,
- հատուկ տեղ է տրվել առանցքային կոմպետենցիաների ընտրությանն ու դրանցից յուրաքանչյուրի ցուցիչների սահմանմանը:

3. Ուսուցիչների վերապատրաստման գործընթացքում հիմնահարցի հետ կապված լուծումներ փնտրելիս բացահայտվել և ճշգրտվել են այդ գործընթացի գերակայող ուղղությունները՝ առանցքային համարելով.

- օտար լեզվի ուսուցիչների լեզուների իմացության, կոմպետենտության մակարդակը,
- հանրակրթության ժամանակակից նպատակադրումը, ուսուցման բովանդակության արդիականացումը և հիմնախնդիրների համապատասխանեցումը ժամանակակից պահանջներին, հայեցակարգերին, մոտեցումներին, վերջին սերնդի չափորոշիչներին,
- լեզվակրթության ասպարեզում ուսուցիչների վերապատրաստման համակարգի կատարելագործումը՝ պայմանավորված անձնակենտրոն, գործունեության վրա հիմնված, ինտեգրմամբ, աշակերտների ինքնավարության կարողությունների զարգացմամբ, արժեքային կողմնորոշումների վերաիմաստավորմամբ, ՏՀՏ-ների ինտենսիվ օգտագործմամբ, մոդուլային տեխնոլոգիաների ներդրմամբ:

4. Մոդուլային կրթական ծրագրի, տեխնոլոգիաների մշակման ընթացքում առանձնացվել են չափանիշներ և սկզբունքներ, որոնց հիման վրա ներկայացվել են մոդուլի կառուցվածքային հիմնական ոլորտները.

- հոգեբանամանկավարժական,
- առարկայական-մասնագիտական,

- նորմատիվ-իրավական կրթության բնագավառի օրենսդրություն,
- ուսուցման և ուսումնառության գնահատման տեխնոլոգիաներ,
- տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներ:

5. Մոդուլային ուսուցումն ուղղված է ոչ միայն առարկայական գիտելիքների և կարողությունների կատարելագործմանը, այլ նաև տվյալ լեզվակիր ժողովրդի մշակույթի, միջմշակութային հաղորդակության նորմերի կենսունակության, գոյատևման, անվտանգության ապահովմանը, էկոլոգիզացիայի սկզբունքների ներդրմանը:

6. Հետազոտությամբ հիմնավորված, ապացուցված է, որ հաշվի առնելով կոնկրետ ուսումնական հաստատության, տվյալ առարկայական ոլորտի բովանդակային ուղղվածությունը, մեր կողմից մշակված մոդուլային տեխնոլոգիայի կիրառմամբ.

- բարձրանում է ուսուցիչների վերապատրաստման դասընթացներին մասնագիտական կոմպետենցիաների զարգացման արդյունավետությունը,
- իրագործվում է միջմշակութային հաղորդակցության պահանջներին համապատասխան ուսուցում և ուսումնառություն՝ ընդհանուր տեսական հոգեբանամանկավարժական, մեթոդական, մասնագիտական համակարգերի ներդրմամբ:

7. Առաջադրված մոդուլային տեխնոլոգիայի ներդրումը հնարավոր է դարձնում ապահովելու.

- ուսուցչի՝ որպես միջմշակութային հաղորդակցության սուբյեկտի անձնային և մասնագիտական որակների բացահայտումն ու զարգացումը, ինչպես նաև մասնագիտացմանը համապատասխան գործառույթների և դերերի շրջանակի ընդլայնումը,
- ուսուցիչների համակարգչային տեղեկատվական գրագիտության զարգացումը,
- ինովատիվ, ստեղծագործական մտածողության դրսևորումը,
- ինքնուսուցման և ինքնագնահատման կարողությունների ձևավորումը,
- շարունակական կրթությունը,
- ուսումնառության ձեռքբերված որակները շղթայաբար աշակերտներին փոխանցելու սահուն գործընթացը:

Այսպիսով, մշակված մոդուլային տեխնոլոգիան նպատակաուղղված է հոգեբանամանկավարժական, լեզվաբանական, հաղորդակցական, մեղմասնագիտական, առարկայական համալիր կոմպետենցիաների ձևավորմանը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում

1. Արնաուդյան Ա.Պ., Ուսուցիչը որպես մանկավարժական մասնագիտական կուլտուրայի սուբյեկտ, «Բանբեր», ԵՊԼՀ, Պրակ 3: Մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկա, Եր.-Լինգվա, 2010, էջ 12-15:
2. Արնաուդյան Ա.Պ., Ուսուցիչը որպես կրթական բարեփոխումների իրականացման հիմնական շարժիչ ուժ.- Կրթության բարեփոխումներ հիմնախնդիրներ, հանրապետական գիտաժողովի նյութեր, Վանաձոր, 2010, էջ 51-58:
3. Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար.-Եր.: Կրթության ազգային ինստիտուտի հրատարակչություն, 2004.-178 էջ, (համահեղինակությամբ):
4. Նոր մոտեցումներ ուսուցիչների պատրաստման գործընթացին. *Այլընտրանքային մոտեցում*. Եր.:Նոյյան տապան.-2004.-174 էջ. (համահեղինակությամբ):
5. Ուսուցիչների վերապատրաստման գործընթացի կատարելագործումը: *Ձեռնարկ ուսուցիչների վերապատրաստման համար*.- Եր.:Լուսաբաց.-2007.-336 էջ, (համահեղինակությամբ):
6. Ուսումնառությունն ու դասավանդումը կրտսեր դպրոցում.- Եր.:Լուսաբաց.-2007.-320 էջ, (համահեղինակությամբ):

Арнаудян Анаит Петросовна

**МЕТОДОЛОГИЧЕСКИЕ ОСНОВЫ РАЗВИТИЯ
ПЕДАГОГИЧЕСКОЙ ПРОФЕССИОНАЛЬНОЙ КОМПЕТЕНТНОСТИ В
СИСТЕМЕ ПОВЫШЕНИЯ КВАЛИФИКАЦИИ УЧИТЕЛЕЙ**

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01. «Теория и история педагогики».

Защита состоится 3-го июля 2014 года в 14.00 часов на заседании специализированного совета 020 ВАК «Педагогика» при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна по адресу: 0010, г. Ереван, ул. Тиграна Меца 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования

В условиях расширения международных связей, демократизации и глобализации общественно-политических и социально-экономических отношений, распространения коммуникационных и информационных сетей, интернационализации науки и производства, бурного развития языкового плюрализма возникает необходимость модернизации образовательных систем. Переход к постиндустриальному информационному обществу создает предпосылки для пересмотра основных концептуальных положений в области образования: конструктивного преобразования педагогической реальности, переориентации в сфере образования и воспитания на “человеческий фактор”, на “проблему развития человека”. Сегодня на передний план выдвигается проблема формирования профессиональной компетентности и развития профессиональной культуры учителей на основе модернизации образовательных систем и овладения современными технологиями.

Актуальность данного исследования обусловлена:

поиском наиболее эффективных путей повышения профессиональной компетентности учителей в системе повышения квалификации и недостаточной разработанностью данной проблемы;

несоответствием между социальным заказом и востребованностью специалистов высокого профессионального уровня и существующей традиционной практикой их подготовки;

противоречием между необходимостью внедрения компетентностно-деятельностного подхода в систему дополнительного образования и отсутствием научно обоснованного подхода к решению этой проблемы.

Цель исследования:

Разработка теоретических основ и методического инструментария для развития профессиональной компетентности учителей иностранных языков в системе дополнительного педагогического образования.

Задачи исследования:

проанализировать педагогическую, психологическую, методическую и лингвистическую литературу по проблеме исследования;

раскрыть сущность и содержание понятий “компетентность”, “компетенция” и их отдельных компонентов;

определить факторы, обеспечивающие успешность развития профессиональной компетенции учителей иностранных языков в процессе повышения квалификации;

разработать и апробировать на практике модульную технологию повышения квалификации учителей, основанную на интегрированных, интерактивных заданиях.

Научная новизна исследования :

- обоснованы современные требования к процессу формирования совершенствования профессиональной компетентности учителей языкового профиля в системе повышения их квалификации;
- выявлены факторы и конкретизированы основные направления, способствующие совершенствованию профессиональной компетенции в процессе повышения квалификации учителей;
- раскрыты сущность и содержание многоуровневых компетенций учителей языкового профиля, направленных на реализацию основ языкового образования: нормативно-правовой, профессионально-предметной, информационно-коммуникационной, контрольно-оценочно-коррекционной.
- в соответствии с инновационными требованиями общекультурного, интеллектуального, социального и профессионального характера
 - разграничены понятия компетентность и компетенции учителей языкового профиля;
 - доказано, что реализация компетентностного подхода способствует повышению познавательного интереса учителей, их активному вовлечению в учебный процесс.

Теоретическая значимость исследования состоит:

- в теоретическом обосновании содержания модульной программы и методики ее реализации;
- в расширении научно-теоретических постулатов, касающихся процесса профессионального становления учителей;
- в обосновании и развитии методов решения проблемы формирования профессиональной компетентности учителей языкового профиля.

Практическая значимость исследования:

- разработана модульная программа повышения квалификации учителей языкового профиля, которая может быть внедрена в систему дополнительного образования;
- полученные результаты могут быть использованы в лекционных курсах, на семинарских и практических занятиях в специальном вузе и на факультетах иностранных языков.

Структура и объем диссертации:

Диссертация объемом 128 страниц компьютерного текста состоит из введения, двух глав, заключения, списка литературы и приложений. В ней содержится 9 таблиц, 6 схем и 10 диаграмм.

ARNAUDYAN ANAHIT PETROS

METHODOLOGICAL FOUNDATIONS OF ENHANCING EDUCATIONAL SKILLS IN THE SYSTEM OF TEACHER PROFESSIONAL DEVELOPMENT

Thesis for getting a candidate degree of pedagogical sciences, specialty 13.00.01 “Theory and history of Pedagogy”.

The defense will be held on July 3, 2014 at 14.00 at the meeting of Specialized Pedagogical Committee 020 HAC of the Armenian Pedagogical University after Kh. Abovyan.

Address: 0010 Yerevan, Tigran Mets 17.

SUMMARY

The relevance of the research

In view of the fact that international relations are increasing, political and socio-economic ties are becoming more democratic, new communication and information systems are being developed, science as well as production is becoming more international and language plurilingualism is flourishing, reforms in the educational system become inevitable. Transition to post-industrial information society creates conditions for revising basic conceptual approaches in the field of education: fundamental revisions in the field of pedagogical realities, re-orientation in education on “human factor” and the issue of “human capacity building”.

Nowadays, the issue of developing professional capacities and professional teacher culture, in the framework of educational reforms, has become a matter of high priority.

The relevance of the research is justified for:

- seeking new ways for increasing the professional competence of teachers qualification enhancement system and in view of the fact that the question issue under discussion has not been fully studied;
- discrepancy between the social order and the demand of highly qualified specialists as well as the traditional ways of their training;
- contradictions between the necessity of implementing an efficiently functioning approach for supplementary education and the lack of a scientifically approved approach to the solution of this problem;

The aim l of the research

Develop theoretical and methodological ground for professional capacity – knowledge and skills in the system of lifelong education.

Objectives of the research:

- analyze pedagogical, psychological, methodological and linguistic literature on the question issue under discussion,
- reveal the essence and meaning of the notions “competency” and “competence” and their different components,
- define the factors that contribute to professional growth of the foreign language teachers competence in the process of professional quality enhancement programs,
- develop and pilot model technologies for teacher professional development, based in integrative and interactive tasks.

Scientific novelty of the research:

- is based on contemporary demands for the profession of language teachers in the system of their professional development,
- factors and concrete directions are specified that will promote teacher professional competence under teacher training,
- essence and content of multilevel language teacher competencies are specified, directed to the realization of fundamentals of language education, i.e. normative laws, subject area related, information-communication, assessment-evaluation,
- the notions of “competence” and “competency” of language teachers have been differentiated,
- it has been proved that the competence approach contributes to the enhancement of teacher motivation, cognition and their active involvement in the teaching process.

Theoretical value of the research is in:

- differentiation between the notions of “competence“ and “competency”,
- theoretical justification of the module program content and methodology of their implementation,
- enlarging scientific-theoretical postulates related to the process of teacher training,
- developing methods that address the issues of language teachers’ professional competency development.

Practical value of the research

- Module, program for language teachers’ professional qualification enhancement has been developed, that might be included in the system of teacher training.
- The results can be used in lectures, at workshops and practical seminars in specialized educational institutions and in language departments of universities.

Structure and volume of the research

The dissertation consists of an Introduction, two chapters, Conclusion, References and Appendices. It has nine tables, six charts and ten diagrams. The total number of pages is 128 (without appendices).

